ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍԼԱՎԻԿ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական նկարիչ Սլավիկ Պարոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարյան փողոց հ. 11 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԼԱՎԻԿ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ժողովրդական նկարիչ Սլավիկ Պարոնյանը ծնվել է 1929թ. հոկտեմբերի 31-ին Երևանում:

1955թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը՝ սովորելով Մարտիրոս Սարյանի, Հովհաննես Զարդարյանի, Գաբրիել Գյուրջյանի, Արա Սարգսյանի մոտ:

1957թ. Մոսկվայում մասնակցել է Գեղանկարիչների 6-րդ համաշխարհային երիտասարդական փառատոնին: Ստեղծել է մեծաքանակ և բարձրարվեստ գեղարվեստական գործեր՝ առավելապես բնանկարներ՝ հայկական բնաշխարհին բնորոշ գույներով, դիմանկարներ, եթերային, անաղարտ երանգներով, առինքնող ձգողական ուժով: Բազմաթիվ աշխատանքներ ցուցադրվել են Հայաստանում և արտերկրում: Մասնակցել է մի շարք միջազգային հեղինակավոր ցուցահանդեսների:

1956թ. եղել է Հայաստանի, 1960թ.՝ ԽՍՀՄ նկարիչների միության անդամ, 2010թ.՝ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի պրոֆեսոր: 2009թ. կայացել է անհատական ցուցահանդեսն Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում:

1983թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր, 2012թ.՝ ՀՀ ժողովրդական նկարչի կոչման:

Սլավիկ Պարոնյանը մահացել է 2014թ. ապրիլի 10-ին Երևանում:

ՀՀ ժողովրդական նկարիչ Սլավիկ Պարոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարյան փողոց հ. 11 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ նկարիչների միության նախագահ Կ. Աղամյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՍԼԱՎԻԿ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սլավիկ Պարոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՍԼԱՎԻԿ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սլավիկ Պարոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ